Azg

Azg armenian daily

9 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1994. ՈՒՐԲԱԹ # 236 (739)

Բենզին՝ լիտրը 200 դրամով

ՀՀ նյութական ռեսուրսների նախարարությունը տեղեկացնում է, որ Երևանում շարունակվում է բենզինի վաճառքը լիտրը 200 դրամով: Այն կարելի է ձեռք բերել ինչպես ստացիոնար, այնպես էլ շարժական լցակայանում: Վերջիններս տեղակայված են Հերացու, Քոչարի, Լենինգրադյան փողոցներում, Կիևյան և Հայրապետի կամուրջների մոտ, ոստիկան կրկնակի, մարզահամերգային համալիրի, լամպերի գործարանի, բուսաբանական այգու, Նորքի զանգվածի «Ռենիվերսալի», Երևանյան լճի, Չեչոտնի ուսանողական հանդուցարանի, «Հրազդան» մարզադաշտի, Հյուսիսային ավտոկայանի (Մեսրոպի մայրուղի) մերձակայքում: Շարժական լցակայանների աշխատանքը սկսվում է առավոտյան ժամը 10-ից:

Վարչապետը Մոսկվայում ԱՊՀ երկրների նիստին

ՀՀ կառավարության մամլի ծառայությունից հայտնեցին, որ վարչապետ Հրանտ Բագրատյանի գլխավորությամբ կառավարական ուղևորությունը մեկնել է Մոսկվա, մասնակցելու այսօր դեկտեմբերի 9-ին ԱՊՀ մայրաքաղաքում կայանալիք ԱՊՀ անդամ պետությունների կառավարությունների ղեկավարների նիստին:

ՄԵԾ ԵՂԵՌՆ-80

Միացեալ յայտարարութիւն Հայկական ցեղասպանութեան 80-ամեակին առթիւ

Ազգային դասական մեր երեք կուսակցությունների միջև 1965 թ-ից Մեծ եղեռնի 50-ամյակի օրերից սկսված համագործակցությունը Հայ դատի հետապնդման և Ցեղասպանության միջազգային ճանաչման գծով շարունակվում է անխախտ: Հատկապես կար տարբերվեին, ինչպիսին է առաջիկա տարին՝ Մեծ եղեռնի 80-ամյակը, դասական երեք կուսակցությունների գերագույն մարմիններն են լինում * սահմանելու կուսակցական և համաժողովրդական ոգեկոչման հանդիսությունների, բոլորի և գիտական ու հասարակական այլազան միջոցառումների: Այդպես նաև այս անգամ. Մոսկիս-դեմոկրատ Դաշնակցության կուսակցության Կենտրոնական վարչությունը, Հայ յեղափոխական դաշնակցության Բյուրոն և Ռամկավար ազատական կուսակցության Կենտրոնական վարչությունը խորհրդակցություններից հետո որոշել են հանդես գալ սույն հրատարակվող հայտարարությամբ: Հիշեցնենք նաև, որ Մեծ եղեռնի 80-ամյակի առթիվ ամիսներ առաջ Հայաստանում կազմվել էր նաև պետական հանձնաժողով ՀՀ նախագահի գլխավորությամբ, որից խնամքով դուրս էին քաղվել ոչ միայն մեր դասական, այլև մնացյալ բոլոր կուսակցությունները, ինչպես նաև սիրոմահաց կազմակերպություններն ու մարմինները, ինչը արդարացի դժգոհության տեղիք էր տվել հասկացող սիրտերի շարքերում:

1995-ի Ապրիլի 24-ը 80 ամեակն է հայության դեմ 1915 թուականին գործադրուած ցեղասպանութեան, Թուրքիոյ կողմէ, որ բնաջնջեց տարբեր երկու միլիոն հայ, ամայացուց ամբողջ Արեւմտահայաստանը իր բնիկ տարրն եւ իւրացուց անոր դասական հայրենիքը:

Ի հեռուկս այն իրողութեան, որ մի ցազգային համայնք ցեղասպանութիւնը կը նկատէ մարդկութեան դէմ գործուած ոճիր, միջազգային ատեաններու եւ խորհրդաժողովներու կողմէ նուիրագործուած է մարդու իրաւանց եւ ազգերու ինքնորոշման իրաւունքը, կը մերժուի հողային բռնագրաւում, այսօր, դարուս Ա. ցեղասպանութենէն եւ մեր ժողովուրդի հայրենազրկումէն ուր տասնամեակներ եսմ, ոճիրը դեռ կը մնայ անպատիժ եւ անհատոյց: Ընդհակառակն, միւս կողմէ ոճրադարձ տերութիւնը կը ջանայ հայու հետ չքողուլ բռնագրաւեալ Արեւմտահայաստանի մէջ, ուր յատուկ ծրագրումով կը խանգարին դասական ու խաղաղարարական անգնահատելի արժէք. ներկայացնող կոթողներ:

Միջազգային համայնքի դատապարտելի լռութիւնը, անտարակոյս, ա նուղղակի հաւաքերութիւն կ'ընծայէ ժամանակակից Թուրքիոյ, որ ոչ միայն կուրանայ իր նախորդներուն ոճիրը, այլեւ կը դիմէ նոր յանցագործութիւններու, հետեւողականօրէն հետապնդելով իր փանթուրական երազին իրականացումը, որուն առաջին քայլերը հայուն ու Հայաստանի ընդմիշտ բնաջնջումն է, ինչպես կ'ապացուցէ հայաբնակ Արցախը հայաթափելու դաւը, որ շարունակութիւնը կը կազմէ Մեծ եղեռնին:

Մէկ կողմէ Թուրքիոյ ուրացումները, իսկ միւս կողմէ մեծ տերութեանց բռնած շահադիտական, հաճոյակատար ընթացքը բարէ դէտերութեան նկատմամբ, տասնամեակներ ամբողջ դատ ճառ հանդիսացան, որ Հայկական Դատը մնայ անկոյծ, իսկ յանցագործը շարունակէ գործել անպատիժ, ար համարհելով միջազգային ի զօրու ա մեն՞օրեայ ու կանոն:

Այսուհանդերձ, որքան ալ երկար տեւէ մեկուն միջազգային կարծիք մոլորեցնող, իսկ միւսներուն ալ ոճիրին հանդէպ լռութիւն պահող դաւը, այսօր՝ եղեռնի ութսունամեակին առթիւ, բովանդակ հայութիւնը, վերջապէս կանգնած ազգային ազատ ու անկախ դեպանութեան սահմանների դիրքերու թէ Սիւրոքի մէջ, կոչուած միանամուտ ծառայումով յայտարարելու միջազգային ատեանին, որ Հայ նեղասիրտ ազգ չարամանցելի է:

Հայ ժողովուրդը, որպէս մէկ եւ անջնջելի ամբողջութիւն, հոգան է ու կը մնայ անդրդուելի դիմադրելու

Այս ճակատագրի գուրարը վերջ դիտի յունենայ այնքան ատեն, որ արդար հատուցում չէ կատարուած մեր նահատակ ու իրաւազուրկ ժողովուրդին:

Դիմելով միջազգային բոլոր ատեաններուն, աշխարհի տէրութեանց եւ բարի կամեցողութեան տէր մարդոց, ակնկալելի հան երբեմ միակամ ու հաստատակամ, բովանդակ հայ ժողովուրդը կը դիմանցէ, որ ճանչցուի ու դատապարտուի գործուած ցեղասպանութիւնը եւ բռնախլուած բոլոր իրաւունքները վերադարձուին իրենց միակ ու անփոխարինելի իրաւատիրոջ հայութեան:

Միջազգային հիմնարկներու եւ առաջին աթոռ Միացեալ Ազգերու Կազմակերպութենն ներս, Աղանիվութեան խորհուրդի մեծերէն, եւրոխորհուրդէն ու մարդու իրաւանց դատարան յանձնաժողովներէն հայութիւնը կը դիմանցէ, լոկ ու դարգարդես, որ գործադրութեան դնեն իրենց իսկ կողմէ նուիրականացուած սկզբունքները, որոնք կը դատապարտեն ցեղասպանութիւնը, հայրենազրկումը, ազգի ու մարդու իրաւունքներու ամէն բռնաբարում, ազգային փոքրամասնութիւններու բնաջնջում:

Կոչ կ'ընենք նաեւ մեր բարեկամ եւ յատկապէս մեզի բախտակից տերութեանց ու ժողովուրդներուն, որ աեւ լի գործուն զօրակցութիւն բերեն հայութեան բռնախլուած իրաւունքներու ձեռքբերման մեր դայրարին, որ ազատութեան ու արդարութեան ծարաւի բոլոր ժողովուրդներուն եւ մարդոցն է միաժամանակ:

Եղեռնի ութսունամեակը առիթ է, նոյն ատեն, վերանորոգելու մեր հաւատարմական ուխտը հանդէպ հայկական դահանջատիրութեան, անոր յաջողութեան համար ոչ մէկ զոհողութեան առջեւ կանգ առնելու վճռական յանձնառութեամբ: Ուստի, կոչ կ'ուղղենք, որ ամէնուրեք, համայն հայութեամբ՝ եկեղեցական իշխանութիւններով, կուսակցութիւններով ու միութիւններով գործենք, ցեղասպանութեան 80-ամեակի միասնական ոգեկոչումով, ապեի դիմեն եւ ուժական համագործակցութեամբ, ամէն բան վեր գերադասելով համազգային, գօտեղնդուած մեր ազգային նուագոյն նուաճումներով եւ այն հաստատ համոզումով, որ հայուն դատը արդար է, իսկ արդար դատ մը ուր կամ կանուխ եր յաղթանակի. անդայմանօրեն:

Ի Պ. Ն. Պ. ՊՈՒՐՍԱԼԻԱՆ,
ՍԱՐԳԻՍ ԱՍԼԱՆՅԱՆ
Հ. Ա. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ
Ռ. Ռ. ՀԱՅ ԴԱՏԻ ԿԱՆԱՆՑ
ՍԱՐԳԻՍ ԱՍԼԱՆՅԱՆ

8 Դեկտեմբեր 1994

ՆԻԿՈՍԻԱ

Բաբկեն Արարքցյանի այցը Կիպրոս

Հայ եւ հույն ժողովուրդների բարեկամության ոգով

ՏԻՐՈՅ ՏԵՐ-ԹԱՔԵՈՅԱՆ
Մեծագոյն թղթակցությունը

ՆԻԿՈՍԻԱ, 8 ԴԵԿՏԵՄԲԵՐ: Հայաստանի խորհրդարանի նախագահ Բաբկեն Արարքցյանի Կիպրոս այցն սկսվեց հայ և հույն ճակատագրակից ժողովուրդների բարեկամության ոգուն համապատասխանաբար ծեր ոգեկոչական, բայց բովանդակության հարազատ ու մտերմական:

«Ոչ միայն Կիպրոսի հայերին, այլև աշխարհի բոլոր հայերին համարում եմ մեր եղբայրներ, որովհետև նրանք մեր հարազատներն են», այս խոսքերով Կիպրոսի խորհրդարանի նախագահ Այնիսխ Դալանոսը դիմավորեց հայաստանցի իր ոգեշնչակցին ու նրան ողջունեց ոգեսիրությամբ: Լարնակայի օդանավակայանում: «Կարիք չկա շեշտելու այն մոտիկ և անկեղծ հարաբերությունները, որոնք միացնում են մեր երկու ժողովուրդներին», ասաց նա և շարունակեց. «Էրթելիական զգում արտահայտությունը Բուենոսայրեսում ստեղծվելուց հետո հայ և հույն ժողովուրդները զոհերն են եղել գեղասպանության: Սակայն, դժբախտաբար, երկու չասի և երկու կբիս մոտեցման դարձառով համաշխարհային հասարակական կարծիքը դեռևս չի ճանաչել այդ ահռելի անիրավությունները, որոնք գործվել են մեր ժողովուրդների դեմ և ոչ մեկ ջանք է կատարվել ողջունելու դրանք: Հետևաբար մեր դայրը նույնն է և մեր ջանքերը դեմ է լինեն փոխադարձ, միջազգային օրենքների և դարձանագրերի շրջանակներում»:

Այս մտքերով ողջունելով բարեկամ երկրի ներկայացուցչին, Այնիսխ Դալանոսը բարի գալուստ մաղթեց նրան և ողջունող դասվիրակությունը, որի կազմում էին Արման Կիրակոսյանը, Մարաս Այնեսանյանը, Մենակ Գաբրիելյանը, Ռոբերտ Այնիսանյանը և Վարեն Ղազարյանը:

Տես էջ 2

ԱՆՑՈՒՂԱՐՁ

Էներգամատակարարումը կփոխվի շաբաթվա վերջում

Հայաստանը Ռուսաստանից գազ չի ստանում

Հանրապետությունում շարունակվում է դրսևորվել բնակչությանը էներգամատակարարման նախկին մեկնաբանությունը: Դեռևս հաստատված չեն էներգամատակարարման գրաֆիկի փոփոխման կոնկրետ ժամկետները, որովհետև դա կախված կլինի հանրապետության մտնող գազի հանակից: Այնուամենայնիվ, համաձայն ՀՀ դեպարտամենտի, մինչև շաբաթվա վերջ հնարավոր կլինի ավելացնել բնակչության էներգամատակարարման ամսական ժամանակը:

Մյուս կողմից, դադարեցվել է Հայաստան մտնող դրսական գազի հոսքը: Համաձայն ՀՀ կառավարության մամլի ծառայության դեկավար Վլադիմիր Մանուկյանի հաղորդման, Հայաստանը ռուսական գազ ստացել է ընդամենը 2 օր: Ներքին գազի հոսքի վերսկսումից հետո դադարեցվել է ռուսական գազի ստացումը: Ներկայումս, ՀՀ կառավարության մամլի ծառայության տվյալներով, Հայաստան է մտնում շուրջ 2 մլն խմ. գազ: ՓՈՒՍ

ՀԱՄԱՌՈՏ

Խաղաղարարների կազմում կլինեն ուկրաինացիներ

ԿԻԵՎ, 8 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ՓՈՒՍ: Ուկրաինայի նախագահ Լեոնիդ Կուչմայի հայտարարել է, որ ուկրաինացի զինծառայողները կմասնակցեն ԵԱՀԿ հովանու տակ անցկացվելիք խաղաղապահի գործողություններին, այդ թվում Լեռնային Ղարաբաղում եւ Աբխազիայում: Վերջերս ԱՄՆ կատարած այցի ժամանակ հանդիպելով «Ամերիկայի հայկական համագումարի» ներկայացուցիչներին նա ասել էր, թե ուկրաինացիները չեն մասնակցի դարաբաղյան հակամարտության՝ գոտում իրականացվելիք խաղաղապահ գործողություններին, եւ որ Ուկրաինան շարունակելու է զենքի վաճառն Ադրբեջանին:

ՌԴ անվտանգության խորհուրդը Չեչնիային զինաթափության է կոչում

ՄՈՍԿՎԱ, 8 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ՓՈՒՍ: Ռուսաստանի անվտանգության խորհուրդը կոչ արեց դինել բոլոր տեսակի մանապրական ճանապարհներին Չեչնիայի հակամարտող կողմերին զինաթափելու համար: Այս հայտարարությունը տարածել է խորհրդի անդամ, Դաղստանի խորհրդի նախագահ Վ. Շամիլկոն: Հայտարարության մեջ ուղղակիորեն նշվում է, որ Չեչնիայում սակա ապօրինի զինված խմբերը դեմ է զինաթափվեն եւ չեզոքացվեն: Ռուսաստանը մեծ բվով զորք ու տեխնիկա է կուտակել Չեչնիայի սահմանի մոտ այն բանից հետո, երբ Մոսկվայի ուղակցությունը վայելող ընդդիմադիրները չկարողացան տարածել Ջոխար Դուդայևին:

Տես էջ 3

Թուրք գեներալն ընդունեց, որ զեմ են ուղարկում մահմեդականներին

ՏԵՐՈՒ ՍԱՍՈՒՆՅԱՆ
Հատուկ թղթակից

ԼՈՆԴՈՆ, 8 ԴԵԿՏԵՄԲԵՐ: «Թուրքիան միայն մեղմ ձեռով միտեց անպայմանորեն բաբաթվա այն հիմնադրամները, թե Մեկնարան Բոսնիայի մահմեդականներին զենք է մատակարարել, միեւնոյն ժամանակ մոռանալով Միացյալ Ազգերի խաղաղարար ուժերում: Այս մասին Սունդայ թայմզ հանդարեց The Independent-ի լրագրող Հյու Փոսնիի: Նշելով, թե Թուրքիայի նախկին զորահրամանատար Դոգան Գյուրեշը իր մասնամասնությունն է հայտնել զենքի գաղտնի մատակարարման մասին: Գեներալ Գյուրեշը նշել է նաեւ, թե ուղարկվող զենքի 90 տոկոսը բռնագրավվել է խորվաթների կողմից Թուրքիայի գնված ուժերի հրամանատարությունն իր հերթին հերքել է զենքի մատակարարման մասին բոլոր լուրերը: Արգործակալարարության ներկայացուցիչը հաստատել է, թե այդ մասին որեւէ տեղեկություն չունեն:

«Ակցանեմեն մեզ ինչպես նաեւ ամբողջ Բոսնիայի համար եմ եմ բարդ վիճակի. բայց դրա հետ մեկտեղ մենք հավատարիմ ենք Միավորված Ազգերի ուժերին», նշել է արտգործնախարարի բանբերը:

ՆԱՏՕ-ն արագացնում է ՄԱԿ-ի ուժերի դուրսբերումը

ԲՐՅՈՒՍԵԼ, 8 ԴԵԿՏԵՄԲԵՐ, WSJ, Առնելով ռեալ, Փաստ: ՆԱՏՕ-ի անդամ 16 երկրների ներկայացուցիչները հանձնարարեցին վերջին հարց բարձրացնելու իրենց կառավարություններում, թե որքան զինվոր եւ տեխնիկա կարող են տրամադրել Բոսնիա-Հերցեգովինայից ՄԱԿ-ի խաղաղարար ուժերի դուրսբերման գործողությունը նոպատելու համար: Հանդարտ որ 16 երկրների մեծամասն ներկայացուցիչներից եւ ոչ մեկը «կարդալ սարդարտա կիներին» դուրսբերումը չի հանձնում անկասկածելի, բայց բոլորն էլ ընդգծում են, որ ուսումնասիրված ծրագիր է պետք նման անհրաժեշտություն ծագելու դեպքում: Նրանք հեռագիրն ավելի են հանձնվում, որ նման դուրսբերումը տեղի կունենա բռնանման մթնոլորտում եւ պատերազմի բոցերի մեջ գտնվող այդ երկրից 24 հազար խաղաղարարների դուրսբերումը կդանդաղի առնվազն 3 դիվիզիա կամ 20 հազար զինվոր եւ սրա, ինչպես նաեւ տրանսպորտային օդուժ եւ ծովային նավատորմ: Մինչ այդ, ՄԱԿ-ը սկսեց նախապատրաստել մի հանձնարարություն, որում նշվում, թե ինչպես բանակցությունների խաղաղարարների դուրսբերումը, սակայն նրանք մեջ են դրվում գերերի նոր դիրքերի նոր դիրքերի: Արդյունքում, ՄԱԿ-ը լրջորեն մտադիր է տեղի տալ Սարաեւոյի ծառայությունների դեմ: Սարաեւոյի ծառայությունների օգնության տեղափոխումը

digitised by A.R.A.R.@

տեղական

ԿԻՊՐՈՍ

Հայ եւ հույն ժողովուրդների բարեկամության ոգով

Սկիզբը էջ 1

Իր ողջույնի խոսքում ինքն էլ անդրադառնալով հայ կիպրական բարեկամությանը, Բարկեն Արարքյանն ասաց. «Այն դիվանագիտական գինիզմը, որով վերաբերվել է աբխազիայի հանրությունը մեր խնդիրներին, մեզ ոգեւորում է ավելի միասնական լինել: Ես բաց ուրախ եմ, որ Հայաստանի անկախության հռչակումից հետո Հայաստանն ու Կիպրոսն ամեն տեղ միշտ միասին են հանդես գալիս եւ նույն մոտեցումներն ունեն բոլոր խնդիրների վերաբերյալ: Ինձ բախտ է վիճակվել միջազգային շատ կազմակերպություններում աշխատել Կիպրոսի ղեկավարությունների եւ անձամբ ոգեւ. Ղալանոսի հետ, եւ ես հույսով եմ, որ այս մեր այցը Կիպրոս էլ ավելի կնպաստի մեր երկրների միջեւ հարաբերությունների ընդլայնմանն ու խորացմանը: Ես հույս ունեմ, որ մոտ ժամանակներում հնարավորություն կունենանք ընդունելու Կիպրոսի ղեկավարությանը Հայաստանում: Մեր ժողովուրդը ջերմությամբ կընդունի Կիպրոսի ներկայացուցիչներին: Եթե Կիպրոսի համար ամենամեծ բարեկամ երկիր, բառը լավ չի արտահայտում այն կապերը, որոնք առկա են մեր երկու ժողովուրդների միջեւ: Ես հույսով եմ, որ Կիպրոսում հայկական համայնքն էլ ամեն ինչ կանի, որպեսզի մեր երկրներն էլ ավելի մոտ լինեն, էլ ավելի մեծ բարեկամներ լինեն: Սա եկել է դարերի խորից եւ պետք է ամրակայվի դարերում»:

Այսօր հայկական ղեկավարությունը կայցելի Կիպրոսի խորհրդարան, Մեյզոնյան կրթական հաստատություն, կունենա մի շարք հանդիպումներ:

ՍՊԻՏԱԿ

Քոկսն այցելեց աղետի գոտի

ԵՐԵՎԱՆ, 8 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ՓԱՍՏ: Հայաստան ու Ղարաբաղ կատարած 23 այցերի ընթացքում առաջին անգամ բարոնուհի Քոքսայն այցը հանձնակալ երկրաշարժի տարեդարձին: Այդ առթիվ Մեծ Բրիտանիայի Լորդերի պալատի անդամն իր ուղեկիցների հետ մեկնեց Սպիտակ: Նա ծաղիկներ դրեց 88 թվի երկրաշարժի զոհերի հուշահամալիրին:

Սա Իրանի Իսլամական Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան դոկտ. Ռեզայի ելույթի առանցքն էր երեկ ՀՀ ԳԱԱ արեւելագիտության ինստիտուտի նախաձեռնությամբ կայացած հանդիպմանը, որին մասնակցում էին նաեւ դասախոսներ, բոլոգական մշակույթի գործիչներ: Ամենայն գիտականորեն վերլուծելով երկու ժողովուրդների պատմական, լեզվամշակութային առնչությունները, բանավոր կենտրոնական առնչությունները, որոնք դեռ հաղորդեց նաեւ, որ Իրանը Հայաստանի ստրատեգիական, մշակութային եւ տնտեսական բարեկամն է եւ ոչ տակտիկական «ի հակադրություն որոշ ոլորտների, որոնք հայերին օգտագործել են որոշ հակառակորդի հարվածելու կամ բոյկոտելու գործիք, շահագործելով հետո նրան միայնակ բողոքելով, ինչին ականատես եղանք առաջին համաշխարհային պատերազմից հետո...»:

Ինչ վերաբերում է Ղարաբաղյան հակամարտության կարգավորմանը, նա նշեց, որ Իրանն ինքը հայտնվելով ուրախ պատերազմված ու անցանկալի պատերազմում եւ մարդկային հսկայական կորուստներ տալով (նա զոհերի թվում նշեց նաեւ իրանահայ վիրավորներին), լավ գիտե խաղաղության, ինչպես նաեւ անկախության ու կայունության գինը, ուստի հակամարտության հենց սկզբում հանդես եկավ խաղաղության միջնորդի դերում, եւ այժմ էլ պատրաստ է մասնակցել ամեն տեսակ միջնորդական առաքելություններին, որոնք կհանգեցնեն վերջնական խաղաղության: Ինչպես նաեւ պատրաստվում ու հավանություն է այն բոլոր միջնորդությունները, որոնք կաջակցեն խնդրի վերջնական կարգավորմանը:

Ինչ վերաբերում է Ստրասբուրգի ադրբեջանցիների մասին տեղեկություններին, նա հայտնեց, որ զանգվածային լուսավորության միջոցներն այստեղ խեղաթյուրիչ դեր են կատարում: Վերջերս Հայաստանում գտնվող ԵՍՀԽ ներկայացուցիչն դեսպանատանը ներկայացրել է Ստրասբուրգի զանգվածային լրատվության ուղերձը, որում նշվում է, որ ատրպատականցիներ մեկ հարյուրյակ ունեն Իրան անունով, եւ մեկ վարչակարգ Իրանի Իսլամական Հանրապետության վարչակարգը:

Ի դեպ, հարցրեց, ինչպես նշեցին ՀՀ ԳԱԱ արեւելագիտության ինստիտուտի տնօրեն, ակադեմիայի փոխնախագահ Գագիկ Սարգսյանը եւ ինստիտուտի փոխտնօրեն, դոկտոր Նիկոլայ Հովհաննիսյանը, նոքանք ունի երկու երկրների միջեւ գտնվող ԵՍՀԽ ներկայացուցչի դեսպանատանը ներկայացրել է Ստրասբուրգի զանգվածային լրատվության հարցերի, փոխգործունեության հանձնաժողովի նամակը, որում նշվում է, որ ատրպատականցիներ մեկ հարյուրյակ ունեն Իրան անունով, եւ մեկ վարչակարգ Իրանի Իսլամական Հանրապետության վարչակարգը:

ՀԱՆԴԻՊՈՒՄ

Նիֆար Համիդ Ռեզա. «Իրանը շարունակ մնացել է որպես Հայաստանի իսկական բարեկամ»

տակտիկական բարեկամն է եւ ոչ տակտիկական «ի հակադրություն որոշ ոլորտների, որոնք հայերին օգտագործել են որոշ հակառակորդի հարվածելու կամ բոյկոտելու գործիք, շահագործելով հետո նրան միայնակ բողոքելով, ինչին ականատես եղանք առաջին համաշխարհային պատերազմից հետո...»:

Ինչ վերաբերում է Ղարաբաղյան հակամարտության կարգավորմանը, նա նշեց, որ Իրանն ինքը հայտնվելով ուրախ պատերազմված ու անցանկալի պատերազմում եւ մարդկային հսկայական կորուստներ տալով (նա զոհերի թվում նշեց նաեւ իրանահայ վիրավորներին), լավ գիտե խաղաղության, ինչպես նաեւ անկախության ու կայունության գինը, ուստի հակամարտության հենց սկզբում հանդես եկավ խաղաղության միջնորդի դերում, եւ այժմ էլ պատրաստ է մասնակցել ամեն տեսակ միջնորդական առաքելություններին, որոնք կհանգեցնեն վերջնական խաղաղության: Ինչպես նաեւ պատրաստվում ու հավանություն է այն բոլոր միջնորդությունները, որոնք կաջակցեն խնդրի վերջնական կարգավորմանը:

Ինչ վերաբերում է Ստրասբուրգի ադրբեջանցիների մասին տեղեկություններին, նա հայտնեց, որ զանգվածային լրատվության միջոցներն այստեղ խեղաթյուրիչ դեր են կատարում: Վերջերս Հայաստանում գտնվող ԵՍՀԽ ներկայացուցչի դեսպանատանը ներկայացրել է Ստրասբուրգի զանգվածային լրատվության հարցերի, փոխգործունեության հանձնաժողովի նամակը, որում նշվում է, որ ատրպատականցիներ մեկ հարյուրյակ ունեն Իրան անունով, եւ մեկ վարչակարգ Իրանի Իսլամական Հանրապետության վարչակարգը:

Ի դեպ, հարցրեց, ինչպես նշեցին ՀՀ ԳԱԱ արեւելագիտության ինստիտուտի տնօրեն, ակադեմիայի փոխնախագահ Գագիկ Սարգսյանը եւ ինստիտուտի փոխտնօրեն, դոկտոր Նիկոլայ Հովհաննիսյանը, նոքանք ունի երկու երկրների

ՍՈՍԿՎԱ

Համաշխարհային հայկական համաժողովն ընդունեց եզրափակիչ փաստաթղթերը

ՍՈՍԿՎԱ, 7 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ՓԱՍՏ: Դեկտեմբերի 6-ի երեկոյան Մոսկվայի Միությունների տան սյունազարդ դահլիճում աշխատանքներն ավարտեց Համաշխարհային հայկական համաժողովը, որ միաժամանակ հիմնադիր համագումար էր: Փակման հանդիսավոր արարողության ժամանակ Սերժ Ցիլավյանը տեղեկացրեց, որ հայտնի են դարձել համաժողովի տահմանած Նանսենի անվանի մրցանակի դափնեկիրները, ու մրցանակները հանձնեց տերերին, որոնց թվում էին մասնավորապես գրող Վասիլ Բիկովն ու բանաստեղծուհի Սիվա Կապուտիկյանը: Արարողության ժամանակ ելույթ ունեցավ նաեւ ակադեմիկոս Գուրգեն Արզումանյանը, որը ներկաներին ծանոթացրեց իր ղեկավարությամբ մշակված «Քոմոս» ծրագրին ու դրա իրագործման հեռանկարներին: Ակադեմիկոսի ելույթից անմիջապես հետո Սերժ Ցիլավյանը հայտարարեց, որ իր վրա է վերցնում «Քոմոս» ծրագրի ֆինանսավորումը, որ դահանջում է 5 մլն. դոլար, եւ համոզված է, որ յորս տարի անց Հայաստանը կունենա իր արհեստական արբանյակը տիեզերքում:

Արարողության ժամանակ ելույթ ունեցան նաեւ ակադեմիկոս Գեորգի Արբատովը, ՌԴ աշխատանքի նախարար Հենրիխ Մելիքյանը, Մոսկվայում Վրաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Վալերիան Ադամաձեն, Վենետիկի Մխիթարյան միաբանության ներկայացուցիչ հայր Ռաֆայելը եւ այլք: Հանդիսավոր մասին հետեւեց համերգ, որին մասնակցում էին Լիսիցյան քույրերը, Սոֆի Գեւոյանի դարի եւ ոգու քառորը, Սոֆյա Գազարյանը, Ռուբեն Ահարոնյանը, Ռուսաստանի պետական կամերային նվագախումբը՝ կոնստանտին Օրբելյանի գլխավորությամբ: Համերգային բաժնում ելույթ ունեցավ նաեւ կոմպոզիտոր Ռոբերտ Ամիրխանյանը, որի ներկայացած ստեղծագործությունն ընդունվեց որպես նորաստեղծ համաժողովի հիմն:

Վերջում տրվեց ճոխ ճաշկերույթ:

ՓԱՐԻԶ

Ժակ Շիրակը Վանաձորի դպրոցներին

Վանաձորի երկրաշարժից տուժած երկու դպրոցի վերակառուցման գործին իր մասնակցությունն է բերում Փարիզի քաղաքապետ Ժակ Շիրակը, հաղորդեց «Ազատություն» ռադիոկայանը: Նրա հովանավորությամբ Փարիզի բարոններից մեկում կայացել է Հայաստանի հետ կապ ունեցող Ֆրանսիական մարդասիրական երկու կազմակերպությունների նախաձեռնած համերգը: Այս կազմակերպությունները մասնավորապես լայն գործունեություն են ծավալել որբ ու հաշմանդամ երեխաների կարիքները հոգալու ուղղությամբ:

Երեկոյում Ֆրանսիայի մայրաքաղաքի քաղաքապետին ներկայացնում էր փոխքաղաքապետ Ժակ Տիբերին:

Մասնակցել են կաթողիկոսական դպրավիրակ, հայ առաքելական եկեղեցու Ֆրանսիայի թեմի առաջնորդ Գյուս արքեպիսկոպոս Նազարյանը, գերազանցագույն կաղոյանը, վերադարձած Լեւոնյանը, Ֆրանսիայում ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ Վահան Տեր Դեւոնդյանը, ՀՀ լուսնախարարության ներկայացուցիչը, ուրիշ դաշտոնական եւ անդաշտոն հյուրեր:

Ելույթ ունեցողները հատկապես մեջբերել են Ժակ Շիրակի գրառումը Փարիզի հայ համայնքի վերաբերյալ վերջերս կազմված մի դատկերագրքում: Դրանում նա մեծարել է եղեռնից փրկված հայության այն շառավիղներին, որոնք, հենվելով իրենց անխախտելի մի շարք հատկանիշների վրա, մնացել են կանգուն, հայացը միտված առաջային: Մի առաջ, որը, ինչպես նշել է քաղաքապետը, Հայաստանի անկախացումից ի վեր մարմնավորվելով ամբողջ Հայաստանում, չի արգելել Ֆրանսիայի հայությանը նույն սիրով ու նվիրումով շարունակել գործել այն երկրի համար, որն իրենց է դարձել դատության հարկադրանքով:

Համերգի ժամանակ ելույթ են ունեցել գրող եւ բարգմանիչ Ալբեր Անտոնյանը, դաշնակահար Արթուր Ադամյանը եւ ջութակահար Հայկ-Դավթյանը, որոնք հնչեցրել են Հովհաննես Թումանյանի, Կոմիտասի, Արամ Խաչատրյանի, Առնո Բաբաջանյանի, Էդվարդ Բաղդասարյանի ստեղծագործություններից: Համերգի երկրորդ բաժնում հանդես է եկել արգենտինացի դաշնակահար Միգել Էստելլան: ՅՈՒՆԵՍԿՕ-ի մարդու իրավունքների դեսպանը Արգենտինայում: Նրա կատարմամբ հնչել են Դեբյուսիի եւ Շոպենի մանրանվագներ:

Երեկոյի մասնակիցներին հաղորդվել է, որ Ժակ Շիրակի որոշմամբ Վանաձորի դպրոցների վերակառուցման է հատկացվելու նաեւ Փարիզի քաղաքապետարանի Սուրբ Ծննդյան ավանդական հավաքի ամբողջ հասույթը:

ԱՐՄԵՆՊՐԵՍ

ՍՈՍԼՈՒՄ

Քաղաքապետը «երես ունեցող» լրագրողներին պարգեւանումներ է տալիս

«Նախատեսված 2500» շենքերից ներկայումս մայրամուտմամ ցնցուղված է 500-ը» դեկտեմբերի 8-ին կայացած մամլո ասուլիսին ներկա փոխքաղաքապետ լրագրողներին հայտարարել է Երեւանի նախագահ Վահագն Խաչատրյանը: Վերջինս բնութագրել է այն բազում խոչընդոտները, որոնց պատճառով դեռեւս ուշանում է մնացած 2 հազար շենքերի ջեռուցումը: Ջեռուցման նախադպրոցական աշխատանքներ հանկարծակի դադարեցվել են զգալի բնակչության պատճառով, վերանում ցտեղ արդեն հասցրել են վարձներ առաջացնել կաթսայատներում: Տեղեկացվել է նաեւ, որ այսօրվանից ջեռուցվելու են Դավթաշենի 1-3 բաղամասերը: Մայրամուտի կրթության, մշակույթի, կնոջ սիրի բաշխման, մանկապարտեզների եւ մյուս բնագավառների մասին ամփոփ տեղեկություններ հայտնելուց հետո հաղորդավարը հայտնել է, որ ասուլիսի նպատակն էր լրագրողներին ճշմարիտ տեղեկություն տալ հիմնական աղբյուրից, մի բան, որ անմատչելի է այն լրագրողների համար, որոնք «երես չունենին» ասուլիսին ներկա գտնվելու:

Քաղաքային բյուջեն անելանելի վիճակում է, այն այսօր արդեն մոտ մեկ միլիարդ դրամ պարտք ունի տարբեր կազմակերպություններ, սակայն հաղորդավարը Վահագն Խաչատրյանը: Իսկ եթե նշենք, որ յուրաքանչյուր բնակչի համար տարեկան նրանով նախատեսված է բնդամենը յոթ դոլար, արդա հասկանալի կլինի հաղարի նեղությունը վիճակը:

Քաղաքապետի համոզմամբ, ստեղծված խրոնիկական հնարավոր կլինի դուրս գալ, երբ հաղարդարանը կունենա իր օրենդրությունը եւ հնարավորություն հաղարի համար օրենդրական ակտեր բերելու, ինչպես Մոսկվայի կամ Սանկտ Պետերբուրգի հաղարդարանները:

ՓԱՍՏ. ԱՐՄԵՆՊՐԵՍ

ԱՍԿՐԱՊԱՐՀ

Եղեգնաձորի եկեղեցին վառել էին երկու տարի առաջ, ոչ թե հիմա

Մեր թերթի դեկտեմբերի 7-ի համարում «Եղեգնաձոր. Մոլեռանդ կրոնականն այրեց 5-րդ դարի եկեղեցին» վերնագրով հոդվածում, որ մեզ տրամադրել էր «Փաստ» գործակալությունը, ցավալի անճշտություններ կան: Հուշարձանների պահպանության վարչության գլխավոր մասնագետ Վլադիմիր Թորոսյանը զանգահարեց խմբագրություն եւ ասաց, որ «Փաստի» թղթակիցը անփութորեն է շարադրել իր ասածները: Եղեգնաձորի եկեղեցու հետ կապված մի քանի տարի երկու տարվա հնություն ունի: Նույնը հաստատեց նաեւ վարչության պետի տեղակալ Գագիկ Սարգսյանը: Դեռեւս տեղի է ունեցել ոչ թե վերջերս, այլ երկու տարի առաջ, ասաց նա, եւ 13-14-րդ դարի (ոչ թե 5-րդ, ինչպես նշում էր «Փաստը») կառույցի հրդեհից վնասված տանիքը մոլեռանդ նվիրյալի հարազատների նախաձեռնությամբ արդեն վերականգնված է:

Հրդեհի հետեւանքով խայտաբեղի մակերեսից պոկված քանդակազարդ բեկորները դեռեւս պոկված են մնում՝ հաստատապես սոսինձ չլինելու հետեւանքով: Պրն. Սարգսյանի հավաստիացմամբ, մոտ ժամս նակներս խայտաբեղը նախկին ամբողջական տեսքը կվերադարձնեն:

ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ՊԱՏԱՐԱԳՆԵՐ ԲՈԼՈՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՄ

Հիսատակի պատարագներ բոլոր եկեղեցիներում

ԵՐԵՎԱՆ, 7 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ՓԱՍՏ: Ուրաբաթն հայրապետական թեմի առաջնորդ Գարեգին արքեպիսկոպոս Ներսիսյանը տեղեկացրեց, որ դեկտեմբերի 7-ին Հայ առաքելական բոլոր եկեղեցիներում հոգեհանգստյան պատարագներ են տրվել Սողոմոնի երկրաշարժի զոհերի հիշատակին:

Այսօր ժամը 10:30-ին հոգեհանգստյան պատարագ սկսվեց նաեւ մայրաքաղաքի սուրբ Սարգիս եկեղեցում: Առաջին անգամ պատարագին մասնակցում էին երիտասարդաց միությունի «Մանկամեջ» առական եւ աղջիկների մանկական երգչախմբերը:

■ *Երիտասարդաց միությունը ազատագրում է թիվ 1 թեմերնոցին:* Արդեն մի քանի տարի է, ինչ առաջադեմ խարտարությունի թիվ 1 թեմերնոցի եւ Ուրարտյան հայրապետական թեմի Հայ երիտասարդաց միության միջեւ հաստատվել է ջերմ բարեկամություն: Հայրապետական թեմի Երիտասարդաց միության անդամները պարբերաբար այցելում են թեմերնոցի ծերունիներին, խնամում եւ հոգ տանում նրանց, օգնում աշխատանքներին գյուղատնտ ու հոգատարա այս տարին: Արդեն էլ, մասնավոր Ծննդյան տոների կապակցությամբ Երիտասարդաց միությունը հաստատ է նախաձեռնում թեմերնոցի բնակիչների համար: Միության անդամները կայցելեն իրենց ծերունիներին եւ նվերներ կրաբաներ նրանց համար:

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

ՇՐՋԱՆ ԱՊՀ

ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Համայն Ռուսիոն նախագահը

Կադրային փոխատեղումներ

Երբեմն մեկ ամիս տևեց կադրային փոխատեղումների ընթացքը Ռուսաստանի ղեկավարությունում, հասկացվես իբ խանության գործադիր ճյուղում: Այժմ կարելի է լիակատար վստահությամբ ասել, որ Նախարարների խորհրդի վերակառուցումը, «բարձրարյան ներուժումը» թաս Էության նշանակում են դրա լիակատար փոփոխություն, դրա երեսուպտանության (հանձին վարչապետի) ղեկավարման դիրքերում: Վարչապետ Վիկտոր Չերնոմիրդինի դիրքերի բուլությանը հիմա աղեղ ոչ ոք չի կասկածում: Վարչապետի հասցեին նախագահ Բորիս Ելցինը բացահայտ քննադատությամբ հանդես եկավ Գերագույն խորհրդի հրամանատարական կազմի խորհրդակցությունում, որտեղ վարչապետը մեղադրվեց Ռուսաստանի ազգային անվտանգության համար:

Այսպիսով, կոնկրետ խոսենք կադրային փոխատեղումների մասին: Հայտնի է, որ դաշտանը ամենից առաջ կորցրեց Վլադիմիր Կվասովը (Ռուսաստանի Նախարարների խորհրդի կառավարության աշխատակազմի ղեկավար նախարարի դաշտանով): Կվասովի հրաժարականը քննարկվում էր դեռ հունիսի 11-ից, երբ նախագահը նրա գերատեսչությանն առաջին անգամ մեղադրեց չափազանց մեծ բյուրոկրատիզմի համար: Հարկ է նշել, որ Վլադիմիր Կվասովի վարչապետի «աջ ձեռքի» հրաժարականը, կառավարական աշխատակազմի անդամներից ևս մեկի կրճատումը և նախագահի աշխատակազմին դրա հնարավոր վերանայումը կարող են նշանակել միայն մեկ բան. Վիկտոր Չերնոմիրդինը մնում է առանց դաշտանների (նրա անձնական քարտուղարը հաշվից դուրս է) այն իրական ուժի, որը ոչ թե մարմնավորում, այլ կերտում է իշխանությունը: Այսինքն, Ռուսաստանում մնում է գործադիր իշխանության միայն մեկ ճյուղ նախագահ Բորիս Ելցինի (Սերգեյ Ֆիլատովի) ղեկավարությամբ:

Այն որոշակի տպավորությունն է ստեղծվում, թե գործադիր իշխանության հերթական բարեփոխումից հետո դրա երկու ճյուղերը (կառավարությունը և նախագահի վարչակազմը) Բորիս Ելցինի անասելի ջանքերի շնորհիվ միաձուլվել են:

Այսօրվա դրությամբ իրավիճակն այդպիսին է. բոլոր հիմնական նախարարները Պավել Գրաչովը (բանակ), Վիկտոր Երիցը (ՆԳՆ), Սերգեյ Ստեպաշինը (Հանրահանգստության դաշնակցային ծառայություն), Տատյանա Պարսոնովան (Կենտրոնական բանկ, ի դեր, Պետդուման չհաստատեց նրա թեկնածությունը), Վլադիմիր Պանսկովը (Ֆինանսների նախարարություն), Սերգեյ Գրիգորիևը (մամուլի նախարարություն), Եվգենի Յասինը՝ (Տնտեսության նախարարություն) նշանակված են անձամբ Բորիս Ելցինի կողմից, իսկ նրանցից երկուսը Եվգենի Յասինը և Վլադիմիր Պանսկովը կառավարություն են եկել նախագահի վարչակազմից: Երկու նոր փոխվարչապետները Անատոլի Չուբայսը և Ալեքսեյ Բոլդիրևը, նոր դաշտանները ստացան դարձյալ Բորիս Ելցինից և, ինչպես առաջին իսկ մամուլում հայտնվեց շնորհակալության հայտնել և նվիրվածություն արտահայտել Ռուսաստանի նախագահին:

«Կրճատված» դաշտանները կարող են առաջնային չանհանգստանալ (նրանք կազմում են նախագահի աշխատակազմի միայն մոտ 30 տոկոսը) իրենց ապագայի առանձնությամբ: Ռուսաստանի նախագահը որոշել է կրճատել կառավարության աշխատակազմը, բայց չէ որ ոչ ոք չի ապրիլ կրճատված բյուրոկրատներին աշխատանքի ընդունել դեպքական մյուս կառույցներում: «Հանուն աշխատակազմի կրճատման» ներկայումս ծավալված դայխարը, թաս երևույթին, կլինի այնքան արդյունավետ, որքան բոլոր նախընթաց համանման արշավները. «Կրճատել աշխատակազմը, երկարացնել շղթան» կարգախոսը լավ հայտնի է խորհրդային բոլոր քաղաքացիներին 1985-88 թթ. իրադարձություններից: Պարզ է միայն, որ աշխատակազմի իրական կրճատումը անհնար է այն ժամանակաբաժանում, երբ երկրի բարձրագույն ղեկավարությունը հայտարարում է բարեփոխումների հերթական փուլում դեպքական մարմինների ուժեղացման մասին:

Կադրային փոխատեղումները մեծ իրականացում առաջացրին նաև քաղաքական կուսակցությունների մեջ: Նրանց երկրորդաստիճան ղեկավարների հանձնարարությամբ հանդես եկան մասնավոր կենտրոնական կուսակցություններին և խորհրդարանական խմբակցություններին, որոնցից շատերը քաղաքական գայլոնոցի դայլանոցներում հաղթեղորեն հանդիպվում էին բնորոշումների նպիսարեին: Ներկուսակցական սուր դայքարի առարկա է մնում Ռուսաստանի ժողովրդավարական կուսակցությունը (կոմունիստների խմբակցությունում տիրող իրավիճակի մասին մենք նոյեմբերին արդեն գրել ենք «Ազգում»): Առնվազն Էությունը Ռուսաստանի միասնության ու համաձայնության կուսակցությունում տեղի ունեցող երեույթների հայելային արտացոլումն է՝ մի կողմից իշխանությունների նկատմամբ օրինաչափ մնալու Նիկոլայ Տրոֆիմովի ու նրա շրջապատի մտադրությունը, մյուս կողմից Սերգեյ Գլազևի, Սանինովի Գովորուխինի և Օլեգ Բոգոմոլովի գլխավորությամբ Ռուսաստանի ազգային գոյատևման դաշնակցությունը: Ուշում ենք նշել, որ Ռուսաստանի միասնության ու համաձայնության կուսակցության ներսում հակամարտությունը խորացավ նոյեմբերի 15-ին Դումայում դրա ֆրակցիայի նիստում, որի ընդունած բանաձևով Կոնստանտին Զատուլինը հեռացվում է խմբակցությունից և հեռ կանչվում ԱՊՀ գործերի կոմիտեի նախագահի դաշտանից: Դրան ի դաստիարակ նա մերժեց այդ կարգի «բեղադրանքը»:

Ռուսաստանի ժողովրդավարական կուսակցության և միասնության ու համաձայնության կուսակցության ներսում տեղի ունեցող երեույթները վկայում են ռուսաստանյան գենտրիզմի բավական խախտուն հիմքի մասին, որն սկսում է միավել քաղաքական դայքարի իրադրությունների հետ ամենատարբեր լուրջ բախման դեղքում:

Բերված բոլոր փաստերը վկայում են, որ կառավարության և նախագահի աշխատակազմերի կրճատումը բերեցս կիաջորդի այդ երկու կառույցների միաձուլումը Վիկտոր Իլյուշենկոյի գլխավորությամբ, որը վաղուց է նման ծրագիր նյութում:

Նախագահ Բորիս Ելցինը կադրային հարցում հենց այդպիսի զանգվածային գործողություններով փաստորեն կդադարեցնի իրադրության վերահսկման հնարավորությունը:

ՌՈՇԱ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

ՏԱՐԵԼԻՑ

ԱՊՀ-ն երեք տարեկան է

Երեկ, դեկտեմբերի 8-ին, լրացավ Բելովեժյան Համաձայնագրի երրորդ տարեդարձը: Եթե Ռուսաստանի Դաշնության խորհրդի նախագահ Վլադիմիր Շումեյկոն մամլո ասուլիսում ըստ արժանվույն գնահատեց ԱՊՀ ստեղծումը և առաջան, ապա «Վերածնունդ» ազատական հայրենասիրական կուսակցությունը Մոսկվայի Պուշկինի հրապարակ եկավ փայտե ցցերով՝ համաձայնագրի սիմվոլիկ դագաղի մեջ դրանք խրելու համար (ասել է թե՝ վերջնականորեն «սպանելու» համար):

Սակայն, համաձայնագրի «հեղի նակների հասցեին ժամանակ առ ժամանակ հնչող ԽՍՀՄ-ը փլուզելու մեղադրանքները, կարծում ենք, արդյունք են զուտ քաղաքական շահարկումների: Համաձայնագիրն ընդամենը արձանագրեց այն, ինչ 1991 թ. օգոստոսյան խորհրդությունից հետո դարձել էր իրականություն: Համաձայնագիրը սկզբնավորեց նաև որակապես նոր տիպի հարաբերությունների հաստատումը նախկին ԽՍՀՄ տարածքում առաջացած ինտեգրիչ գործընթացների միջև, որոնք արդեն Ալմաթիի հռչակագրով ամրագրեցին Անկախ Պետությունների Համագործակցություն ստեղծելու մասին իրենց ցանկությունը:

Անցած երեք տարիների ընթացքում ԱՊՀ-ի գլխավոր կառույցներ՝ Պետությունների ղեկավարների խորհուրդը, Կառավարությունների ղեկավարների խորհուրդը և Միջխորհրդարանային ասամբլեան, հիմնականում զբաղված էին համագործակցության սկզբունքների և ձևերի, իրավաբանական դաշտի ստեղծման և տնտեսական սերտաճման խնդիրներով: Չնայած կատարված հսկայական աշխատանքին, գործնական բնագավառում արդյունքները բավարարելի էին միայն երկկողմ միջպետական հարաբերությունների շրջանակում: Դրա դաշտաձևերը հանրապետությունների ներքաղաքական գործընթացների ու նախկին ԽՍՀՄ տարածքում ծավալված աշխարհաքաղաքական շահերի բախումներն էին, ինչպես նաև որոշ հանրապետությունների նոր իշխանությունների մտավախությունը՝ կրկին հայտնվել նախկին կարգավիճակում:

Ժամանակը մեղմեց կրքերը, իսկ տնտեսական գործընթացներն արդեն հրամայաբար պահանջում էին փրկել շարունակվող քայքայումից նախկին տնտեսական սերտաճման վերջին մնացորդները: Դրա իրական հնարավորությունները ստեղծվեցին «Տնտեսական միության մասին» պայմանագրի, միջպետական տնտեսական խորհրդի ստեղծման և վճարային միության մասին որոշումները ընդունելուց հետո: Այժմ գործնականում հնարավոր է դառնում ի մի հավաքել որակապես նոր մակարդակի վրա այն, ինչ դեռ մնացել է «Մեծ տնտեսական ճգնաժամից» հետո:

Հայտնաբերելով, որ դնելով հաղթահարման և սոցիալ-տնտեսական զարգացման նոր ուղի, ի սկզբանե գիտակցում էր նախկին տնտեսական սերտաճման դերն ու նշանակությունը և, այլընտրանք չունենալով անցման այդ փուլում ակտիվորեն մասնակցեց ԱՊՀ գործընթացներին բոլոր մակարդակներում՝ ակնկալելով, որ ժամանակի ընթացքում ԱՊՀ գործառույթները «կփոխհատուցեն» ներդրված ջանքերը: Ավելին, այսօր բարենպաստ պայմաններ են առաջացել համագործակցելու միջազգային հանրության հետ, ոչ միայն ինքնուրույն, այլև որպես ԱՊՀ անդամ: Մասնավորապես, երբ վերջերս Բուդապեշտում կայացած ԵԱՀԽ վեհաժողովը դրական որոշում կընդունի Ռուսաստանի առաջարկի կապակցությամբ (խորհրդակցությունը հանձնարարական կարգավիճակի վերլուծման մասին), ապա ԱՊՀ-ն, ինչպես և նշվեցինք, կդառնա դրա լիարժեք անդամ, և Հայաստանը ձեռք կբերի նորագույն սերտաճման գործընթացներին արդյունավետ մասնակցելու հնարավորություն:

Կարելի է ասել, որ այսօր, ի տարբերություն 1993 թվականի, դիտորդների և մեկնաբանների կանխագուշակումները ԱՊՀ-ի ապագայի վերաբերյալ, հիմնականում ավելի լավատեսական են դարձել: Նման լավատեսության հիմար լուրջ փաստարկներ են բերում նաև ԱՊՀ փորձագետները, որոնք հիմարում են, որ 1995 թվականին Անկախ Պետությունների Համագործակցությունը ձեռք կբերի տնտեսական անկումը կանխելու ռեալ մեխանիզմներ և կկարողանա ապահովել հետագա աստիճանական ածի տնտեսական ու կազմակերպչական հիմքերը:

ԱՊՀ-ն երեք տարեկան է... Երկրներների ժամանակն անցել է: Անհրաժեշտ է անցնել կոնկրետ գործերի:

Ա. Ա.

ՀԱՄԱՌՈՏ

Տիկին Ալիզա Չենարը Ռուսաստանում Իսրայելի նոր դեսպան

ՄՈՍԿՎԱ, 8 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ՓՍՍՏ: Դեկտեմբերի 6-ին Մոսկվա ժամանեց ՌԴ-ում Իսրայելի նոր դեսպան նշանակված Ալիզա Չենարը: Տիկին Չենարը փիլիսոփայական և բանասիրական մի շարք ուսումնասիրությունների հեղինակ է և մինչև իր նոր նշանակումը փիլիսոփայություն է դասավանդել Իսրայելի համալսարաններից մեկում: Սինչև Մոսկվա ժամանելը, իր իսկ խոստովանությամբ, Ալիզա Չենարը ջանադրաբար ուսումնասիրել է սովորել:

Տաջիկստանում հայտնաբերվեց զինամթերքի խոշոր գաղտնարան

ԴՇԱՆԲԵ, 7 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ՍՆԱՐՔ ԻՍՍ ՊՐԵՍ: Ռուս սահմանապահները Տաջիկստանի Դաղավազայի շրջանում հայտնաբերեցին խոշոր գաղտնարան, որից դուրս բերվեցին 250 ական, գնդացիրներ, ավտոմատներ և զինամթերք: Հայտնաբերվեցին նաև-քաջիկական անհաշվ ընդդիմության զորամասերի լուսանկարներ:

Ո՞վ ինչքան է ստանում նախկին ԽՍՀՄ-ում

ՎԻԼՆՅՈՒՍ, ՍՆԱՐՔ ԻՍՍ ՊՐԵՍ: Լիտվայի միջին վիճակագրական բնակչի աշխատավարձը հոկտեմբեր ամսին կազմել է 97 ամերիկյան դոլար՝ մոտավորապես այնքան՝ որքան վաստակում է միջին ամերիկացին մեկ օրում: Մի փոքր ավելի լավ է վիճակը մյուս մերձբալթյան հանրապետություններում. Էստոնիայում՝ 108 դոլար, Լատվիայում՝ 140 դոլար: Հարեւանները՝ Ուկրաինան և Բելառուսը ավելի ադքաս են (համապատասխանաբար 24 և 20 դոլար), բայց ահա Ռուսաստանը Լիտվայից անցել է, նրա քաղաքացիները ստանում են ամիսը 106 դոլար: Հայաստանի մասին տվյալներ չկան, բայց «Ազգն» իր կողմից կարող է ավելացնել, որ հոկտեմբերին միջին հայաստանցու աշխատավարձը կազմել է մոտ 2.5 դոլար:

ՌՈՒՍԱՍՏԱՆ

Ընդլայնվում է զենքի գաղտնի վաճառքը

Ռուսաստանում մեծ տարածում է ստանում զենքի գաղտնի վաճառքը: Այս երեույթը ընդգրկել է անգամ Սիբիրի հեռավոր անկյունները: Վերջին շրջանում մեծ թվով նման հանցագործություններ են մերկացվել Օմսկում: Այստեղ սեւ շուկայում կարելի է գնել զենքի ցանկացած տեսակ, եթե գնողը ի վիճակի է վճարելու չափազանց մեծ գումարներ: Այսպես, մեկ նռնակի շուկայական գինը հասնում է 50 ռուբլու: Մասնագետները նշում են, որ այստեղ գործում են զենքի մասակարտման երկու հիմնական աղբյուր. առաջինը Չեչնիայից բերվող զենքն է, երկրորդը Օմսկի մերձակա զինվորական ստորաբաժանումներ, որոնք անգամ մնալով զրաղվում են զենքի գաղտնի արտադրությամբ:

ՄՕՍԿՎԱ

ԳՐՈՇՆԻ

ՌԴ անվտանգության խորհուրդը Չեչնիային զինաթափության է կոչում

Սկիզբը էջ 1

Հիշյալ հայտարարության մեջ ասվում է նաև, թե Ռուսաստանի և Չեչնիայի միջև որևէ հակամարտություն գոյություն չունի: Նշվում է, որ այնտեղ իշխանության համար դայքար են մղում առանձին խմբերը: Այստեղ ընդգծվում է նաև, որ Նիկոլայ Եգորովը համակարգող է Չեչնիայում սահմանադրական օրենսդրության վերականգնմանն ուղղված ՌԴ կառավարության ջանքերը: Ի դեր, Բորիս Ելցինի հրամանագրով ազգությունների հարցերով նախարար Եգորովը նշանակվեց ՌԴ փոխվարչապետ:

Միաժամանակ, ժամանակավոր տեղեկատվական կենտրոնում ՌԻԱ «Նովոստի»-ին բդրակցին հաղորդել են, որ Ջոխար Դուդայևի ապստամբական կազմակերպումները ակտիվորեն դաստիարակվում են դաշտանությունում: Դուդայևին առաջարկվում է նվիրված մարտիկներից ստեղծված, այդպես կոչված, մահապարտների զանգը տեղակայել է անմիջականորեն նախագահի կենտրոնական անի մոտ: Բնակավայրերից Գրոզնի են կանչվում զինապարտներ, կազմակերպում է կանանց զանգվածը: Կառուցվում են ամրություններ, դաշտային օդանավակայաններ, ականապատվում են ճանապարհներ:

■ *ՌԴ նախագահ Բորիս Ելցինը Դ. Բիկովին ազատել է Ադրբեջանի Հանրապետության հետ բանակցությունների մասին ռուսաստանյան դաշտիրանությունների դեկավարի դիրքերից: Նրա փոխարեն է դարձել հատուկ հանձնարարությունների գծով դեսպան Վ. Շիրովը: Ինչպես հաղորդում է ԻՏԱՐ-ՏԱՍՍ-ը, նրա իրավասության դաշտում կլինի ռուս-ադրբեջանական փոխգործակցության ասպեկտների մեծ մասը: Բացատրվում կկարվեն Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման հարցերը, որոնց համար դաշտատարանում է Լեռնային Ղարաբաղում իրադրության կարգավորման ռուսական միջնորդական առաքելության դեկավար Վլադիմիր Լուգինովը:*

Արմենպրես

ՀԱՍԱՌՈՏ

Վրաստանը կարող է զրկվել բեռներից

ԹԲԻԼԻՍԻ, 7 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ՍՆԱՐՔ ԻՍՍ ՊՐԵՍ: Դեկտեմբերի 17-ից Համաշխարհային դաշտեհանային ծրագիրը և նրան միությունը մտադիր են դադարեցնել Վրաստանին մարդասիրական բեռների առաքումները, հայտարարեց հանրապետության վարչապետ Օքսար Պաղացիան: Նրա խոսքերով, դա տեղի կունենա այն դեպքում, եթե Թբիլիսին չկարողանա արագորեն վերականգնել երկաթուղային հաղորդակցությունը Հայաստանի և Ադրբեջանի հետ: Ինչպես հայտնի է, անցյալ տարաբաղդությունից Խրամի գետի կամրջի դայթեցման հետեւանքով միջազգային կազմակերպությունները զրկվել են Բաթում և Ռեւան մարդասիրական բեռներ հասցնելու հնարավորությունից:

■ *Ռուս-նորվեգական համատեղ հանձնաժողովը Լոյս բերակրցոց հյուսիս բնկած հատվածում ուժեղ տատանումներ է գտնվանագրել: Փորձագետների կարծիքով դրա դաշտառն այն տարածքի անկայունությունն է, որտեղով նախկին ԽՍՀՄ-ը տարիներով բաղխումներ մինչև 1990 թվականը բաղում էր Լոյս բերակրցոց ամենամեծ տարածքում:*

ՓՍՍՏ

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

հրապարակ

ԲՈՒՍԱՊԵՏՅԱՆ

ԵԱՀԿ-ն խաղաղարար զորքեր կուղարկի Ղարաբաղ

Հայաստանն օգտագործեց վետոյի իր իրավունքը

զգալի երկարաձգման եւ կողմերի ցուցաբերած կամքի, ինչպես նաեւ ԵԱՀԿ եւ Ռուսաստանի խաղաղարար ջանքերի մասին: Նույն կետում ԵԱՀԿ անդամ բոլոր երկրների նախագահներ կոչ են անում համատեղել խաղաղարար ջանքերը: Երկրորդ կետում խոսվում է այն մասին, թե ինչ կոնկրետ քայլեր են ղեկավարությունը հանձնարարում ԵԱՀԿ-ին եւ Ռուսաստանի միջնորդական ջանքերը (մի բան, որին երկար ժամանակ ձգտում էր հայկական կողմը): Երկրորդ Մինսկի խումբը շարունակելու է աշխատանքը խաղաղական մեծ համաձայնագրի շուրջ: Երրորդ՝ դեպքերները դադարեցնելուց հետո հայտնում խաղաղարար ուժեր ուղարկել հակամարտության գոտի, թեպ որում կարեւոր է նաեւ ԱՄՆ-ի Անվտանգության խորհրդի մասնակցությունը դրան, ինչը լրացուցիչ երաշխիքներ է տալիս:

Ինչ վերաբերում է խաղաղարար ուժերի տեղաբաշխմանը եւ դրանց իրավասությունների, պրոբլեմների մասին էր դրվել մի փաստաթուղթ եւս, ստորագրված ԵԱՀԿ-ի եւ ԱՄՆ-ի Անվտանգության խորհրդի համագործակցությանը, որ որի հակամարտության գոտի խաղաղարար ուժեր ուղարկելու որոշում կայացնելու համար «հակամարտող կողմերությունների» մեկի անհամաձայնությունը կարող է եւ հաշվի չառնվել: Ո՞րն է այս սկզբունքային փաստաթղթի իմաստը: Բանն այն է, որ եթե այս փաստաթուղթն ընդունվեր, արդեն Հայաստանի ձայնը կարող էր եւ հաշվի չառնվել (Ղարաբաղն ընդհանրապես չի հանդիսանում «հակամարտության կողմ ղեկությունը»), իսկ Ադրբեջանը իր համար անհրաժեշտ որոշման դարաշրջանում կարող էր ցանկացած դահիճ ունենալ Թուրքիայի ձայնը: Ուրախ բնական է, որ նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը մնաց փաստաթղթի այդ կետ՝ այն դեղորում, երբ մյուս 52 պետությունները կողմ էին դրան: Վերջերենն առաջարկելով երեք տարբերակ, կամ այդ կետը հանվում է ընդհանրապես (իսկ առանց այդ կետի փաստաթուղթը ոչ մի արժեք չունի), կամ նշվում է, որ այդ կետը չի վերաբերում դարաշրջանի հակամարտությանը (այս տարբերակն իսկույն բացառվեց Ադրբեջանի կողմից), կամ հարցը բողոքվում է հետագա քննարկման: Գերմանիան, որն այդ ու

ԵՐԵՎԱՆ

Միգրացիան հաշվառումից դուրս

Կամ չգիտեմ, թե ինչ է կատարվում իրականում

ես հաճախ էի հանդիպում նրան, երեք որդի ունի, երկուսը՝ Ս. Պետերբուրգում, իսկ երրորդը՝ Ամերիկայում: Չորս թոռնիկ ունի, բայց ուրիշ փոխարինների հետ է իր «ուրախ ժամերն» անցկացնում, փորձելով մեղմել կարոտը: Ես շատուում էի, նա նույնպես արագացրեց խոսքերը. հետո նրան միացան մեր շենքի միայնակ մնացած մյուս ծերունի տատիկներն ու մի քանի բնակիչներ: Աշխատում էի ավելի արագացնել խոսքերս, բայց այս անգամ էլ գործընկերոջս շենքի «ծերությունն ինձ զբաղեցրեց», 75 ընտանիքից, ոչ լրիվ տվյալներով, բնակարանը վաճառել եւ արտասահման է տեղափոխվել ավելի քան 10 ընտանիք: Դա Ծամանյան փողոցի թիվ 3 շենքն է, որն ունի 75 բնակարան:

ՀՀ վիճակագրության պետական դրամական Սնվել Մոսոյանը տարակուսանքով շարժեց թեւերը. «Բնակչության տեղաշարժը չենք գրանցում: Պետք է ստեղծվի մարմին, որը հաշվառի, թե ով ուր է գնում եւ որքան ժամանակով ... Դա կիենվի փախստականների հարցերի գործակալության կամ այլ կազմակերպության վրա: Ասում են, հանրապետությունից 1,5 միլիոն մարդ է դուրս եկել: Ծե ովքեր են հաշվառել եւ ինչպես, դժվար է ասել: Մենք ունենք որոշակի փաստեր, օրինակ, Ռուսաստանում առանց համապատասխան փաստաթղթերի ստուգման տուգանում եւ հաջորդ օրը ետ են ուղարկում հանրապետություն: Սակայն վայում պնդիչապես գրանցում եւ տալիս են թերթիկ, իսկ գործուղման ժամկետը լրանալուն պես պարտավոր են թողնել երկիրը: Չնայած այդ ամենին, ամառ թե ձմեռ, հանրապետությունում շարունակվում է բնակչության տեղաշարժը: Ոչ մի մարմին մեկնողների, ոչ էլ եկողների մասին հաշվառում չի իրականացնում: Վարչության ժողովրդագրության եւ աշխատանքի բաժնի պետ Վահան Բախչեջյան. «հաշվառումը կատարվում է ՆԳՆ ծառայությունների կողմից հաղորդագրությունների եւ բնակության վայրից դուրսգրման եւ գրանցման փաստաթղթերի հիման վրա»: Եւ եթե մինչեւ 91-92 թթ. այս եղանակն արտահայտում էր բնակչության տեղաշարժի իրական վիճակը, ապա վերջին 3 տարիներին՝ ոչ»: Ինչ են ասում վիճակագրության թվերը. 1993 թ. հանրապետություն է եկել 9,874 մարդ, մեկնել է 30691, բնակչության թիվը նվազել է 20817 ով, արտասահմանից եկել է 431, մեկնել է 3165 մարդ, բնակչությունը նվազել է 2733 ով: 1994 թ. 1ին կիսամյակում հանրապետություն է եկել 8039, մեկնել է 17414 մարդ (նվազել է 9375 ով): Նույն ժամանակաշրջանում արտասահմանից եկել է 28, մեկնել՝ 785 մարդ (նվազել է 757 ով): Սկզբիայս է, որ վիճակագրության թվերը ճիշտ չեն արտահայտում բնակչության տեղաշարժի իրական վիճակը: Վարչության աշխատակիցները ոչ միայն չեն ժխտում դա, այլեւ «մեր թվերը եւ վերլուծությունները վերամշակումով պիտի ընդունել, ճիշտ տվյալներ տալ չենք կարող — բոլորն էլ սուբյեկտիվ գնահատական են տալիս հանրապետությունից դուրս եկած բնակչությանը, «մենք ասում ենք, որ թվերը սուտ են, բայց իրականում միգրացիան հաշվառումից դուրս է մնացել»:

Հավանաբար, շատերը միեւնույն կարծիքն ունեն՝ արտասահմանի փորձից ելնելով պետք է ստեղծել միգրացիոն ծառայություն, դա, իհարկե, միջոցների հետ է կապված, բայց ոչնչից դրա հնարավոր չէ հաշվառել, թե ով, երբ, որքան ժամանակով, որտեղ եւ ինչ նպատակ է դուրս եկել Հայաստանի սահմաններից կամ, ընդհակառակը, եկել հանրապետություն: Ո՞վ է իրականացնելու այդ ծառայությունը՝ փախստականների հարցերի պետական վարչությունը, աշխատանքի եւ սոցիալական ապահովության նախարարությունը, ՆԳ նախարարությունը, թե բոլորովին մեկ այլ մարմին, միեւնույն է: Ի դեմ, աշխատանքի եւ սոցիալական ապահովության նախարարությունը (եւ ոչ միայն նրանը) մտահոգված է այդ խնդրով, քանի որ ցանկանում է ճշգրիտ թվեր ունենալ ծեռքի տակ աշխատանքի են բանկա մարդկանց եւ կատարված տեղաշարժերի մասին: Աշխատանքի տեղավորման վարչության պետի տեղակալը գտնում է, որ ծառայության ստեղծումը հստակություն կմտցնի բաց մարմինների աշխատանքներում: Չէ՞ որ շատերը վաղուց այստեղ չեն, իսկ իրենք «զբաղվում են» նրանց աշխատանքի տեղավորման հարցով. հեռացած բնակիչների փոխարեն հարեւաններն ու բարեկամներն են կատարում նրանց բնակավայրի եւ այլ մուծումներ, ինչպես նաեւ ստանում սննդամթերքի կտրոններ:

